Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
1	Հավատարմագրման վերաբերյալ դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***ընտրություններ նշանակելու օրվանից հետո, սակայն ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 10 օր առաջ***	31, մաս 2 ԿԸՀՈ N 3-Ն, 21.01.2022թ.	**14.07.2023-ից մինչև** 7.09.2023	Միջազգային կազմակերպություններ, օտարերկրյա հասարակական կազմակերպություններ, Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպություններ
2	Հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ***	31, մաս 2	**մինչև 14.09.2023**	Միջազգային կազմակերպություններ, օտարերկրյա հասարակական կազմակերպություններ, Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպություններ
3	Քվեարկության օրն ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում իրականացնելու համար հավատարմագրվելու դիմումը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***ընտրություններ նշանակելու օրվանից հետո, սակայն ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 10 օր առաջ***	31, մաս 8 ԿԸՀՈ N 7-Ն, 27.01.2022թ.	**14.07.2023-ից մինչև** 7.09.2023	Լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
4	Հավատարմագրված զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների ցուցակում փոփոխություններ (լրացումներ) կարող են կատարվել. ***քվեարկության օրվանից մինչև 3 օր առաջ***	31, մաս 8	**մինչև 14.09.2023**	Լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ
5	Ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների, Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է. ***ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 3 օր հետո***	12, մաս 2	**մինչև 17.07.2023**	Լիազոր մարմին
6	Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում՝ հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը հրապարակվում է. ***ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 5 օր հետո***	20, մաս 5	**մինչև 19.07.2023**	Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով
7	Նախընտրական քարոզչություն իրականացնելու համար կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին եթերաժամ տրամադրող հեռուստառադիոհեռարձակում իրականացնող մասնավոր հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքն՝ իրենց եթերով հրապարակվում է. ***ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 5 օր հետո***	20, մաս 6	**մինչև 19.07.2023**	Մասնավոր հեռուստա-ընկերություններ և ռադիոընկերություններ
8	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում կուսակցության, կուսակցությունների դաշինքի գրանցման և ընտրական ցուցակի էլեկտրոնային եղանակով ձևավորման համար օգտահաշիվ ստանալու դիմումները ներկայացվում են ***ընտրությունների ժամանակացույցը ԿԸՀ կայքում հրապարակվելուց հետո, բայց ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	8.1, մաս 2 ԿԸՀՈ 3-Ա 31.01.2023	19.07.2023 - **13.08.2023 մինչև ժամը 18:00**	Կուսակցություն, կուսակցությունների դաշինք

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
9	Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հրապարակվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 7 օր հետո***	20, մաս 11	**մինչև 21.07.2023**	Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով
10	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին տրամադրվող՝ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով վահանակների, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում, հասարակական տրանսպորտի կանգառներում և վերելակներում տեղակայված վահանակների քանակի, մակերեսների, դրանց գտնվելու վայրերի և վարձավճարների վերաբերյալ տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***ընտրությունները նշանակվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում***	21, մաս 6 ԿԸՀՈ N 130-Ն, 09.12.2016թ.	**մինչև 24.07.2023**	Արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպություններ կամ մարմիններ
11	Կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 20 օր հետո***	19, մաս 3 ԿԸՀՈ 208-Ն 26.08.2021թ.	**մինչև 3.08.2023**	Երևանի քաղաքապետ
12	Կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում տեղադրվում է. ***ցանկը ներկայացնելու համար սահմանված ժամկետից հետո՝ մինչև հաջորդ օրվա ավարտը***	19, մաս 3 ԿԸՀՈ 208-Ն 26.08.2021թ.	**մինչև 4.08.2023**	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
13	Ընտրական տեղամասերը կազմավորվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ***	16, մաս 1	**մինչև 3.08.2023**	Լիազոր մարմինը՝ մասնակցությամբ համայնքի ղեկավարի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի
14	Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները գրանցման համար փաստաթղթերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45, և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	127, մաս 3	3.08.2023 - **13.08.2023 մինչև ժամը 18:00**	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ
15	Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով գովազդային վահանակներում, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում, հասարակական տրանսպորտի կանգառներում և վերելակներում տեղակայված վահանակներում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45, և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	21, մաս 6 127, մաս 3 ԿԸՀՈ 130-Ն 09.11.2016	3.08.2023 - **13.08.2023 մինչև ժամը 18:00**	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ
16	Համայնքի ղեկավարը սահմանում է տեղամասային կենտրոնները, կազմում է տեղամասային կենտրոնների ցանկը՝ նշելով տեղամասային կենտրոնների գտնվելու վայրը, **ինչպես նաև տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների բնութագրերը** և ներկայացնում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հաստատմանը. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ***	18, մասեր 1, 2.1	**մինչև 5.08.2023**	Երևանի քաղաքապետ
17	Ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***սահմանվելուց հետո երկօրյա ժամկետում***	52, մաս 1, կետ 3	**մինչև 7.08.2023**	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
18	Ընտրողների ցուցակը տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ***	12, մաս 1	**մինչև 8.08.2023**	Լիազոր մարմին
19	Ընտրողների նախնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, ներբեռնելու հնարավորությամբ համացանցում՝ www.police.am հասցեով տեղադրվում է. ***քվեարկության օրվանից 40 օր առաջ***	13, մաս 2	**8.08.2023-ին**	Լիազոր մարմին
20	Ընտրողների ցուցակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. ***քվեարկության օրվանից 40 օր առաջ***	13, մաս 3	**8.08.2023-ին**	Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող
21	Քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին որոշում ընդունվում է. ***նախընտրական քարոզչությունն սկսելուց 10 օր առաջ***	21, մաս 3	**մինչև 13.08.2023**	Երևանի քաղաքապետ
22	Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 35, և ոչ ուշ, քան 30 օր առաջ***	127, մաս 5	13.08.2023 - 18.08.2023	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
23	Քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին Երևանի քաղաքապետի որոշումը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում***	21, մաս 4	**մինչև 16.08.2023**	Երևանի քաղաքապետ
24	Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխումը՝ ըստ ընտրական տեղամասերի կատարվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 30 օր առաջ***	44, մաս 5 ԿԸՀՈ 138-Ն 22.11.2016թ.	**մինչև 18.08.2023**	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
25	Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	44, մաս 6	18.08.2023 - **23.08.2023 մինչև ժամը 18:00**	Աժ խմբակցություն ունեցող կուսակցություն, կուսակցությունների դաշինքների դեպքում՝ խմբակցության ղեկավար, ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
26	Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հերթական համարներ տրամադրվում են. ***գրանցման համար սահմանված ժամկետի հաջորդ օրը***	140, մաս 2	**19.08.2023-ին**	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
27	Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանվում է. ***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հաջորդ օրը***	20, մաս 2	**19.08.2023-ին**	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
28	Արտաքին գովազդային վահանակներում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու իրավունքն ընտրություններին մասնակցող կուսակցությունների միջև բաշխվում է. ***գրանցման համար սահմանված ժամկետի հաջորդ օր***	21, մաս 6	**19.08.2023-ին**	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
29	Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում հրապարակվում են. ***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետն ավարտվելուց հետո՝ եռօրյա ժամկետում***	131, մաս 2	**մինչև 21.08.2023**	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
30	Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ տեղեկանք Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացվում է. ***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրը մեկ***	26, մաս 7	**21.08.2023 -ից սկսած երեք աշխատանքային օրը մեկ**	Առևտրային բանկեր
31	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածուներն իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագիր՝ էլեկտրոնային եղանակով Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են. ***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում***	8, մաս 5 ԿԸՀՈ 23-Ն, 17.06.16թ.	**մինչև 23.08.2023**	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածուներ
32	Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները կուսակցության գույքի և եկամուտների մասին հայտարարագիր՝ էլեկտրոնային եղանակով, Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են. ***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում***	8, մաս 5 ԿԸՀՈ 209-Ն, 26.08.21թ.	**մինչև 23.08.2023**	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ
33	Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները Երևանում և հանրապետության բոլոր մարզերում մասնաճյուղ ունեցող որևէ առևտրային բանկում նախընտրական հիմնադրամ **պարտավոր են բացել**. ***ընտրական ցուցակը գրանցելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ 5 օրվա ընթացքում***	26, մաս 1	**մինչև 23.08.2023, որը վերջնաժամկետն է**	Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
34	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածն սկսվում է. ***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը, ավարտվում՝ քվեարկության օրվանից 1 օր առաջ***	19, մաս 1	23.08.2023 - **15.09.2023 մինչև ժամը 24:00**	Ընտրողներ, թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
35	Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից իրենց նախընտրական ծրագրերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած էլեկտրոնային ձևով ներկայացվելու դեպքում ԿԸՀ համացանցային կայքում տեղադրվում են. ***ներկայացվելուց հետո 3-օրյա ժամկետում, բայց ոչ շուտ, քան նախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկը***	**8, մաս 4**	**23.08.2023-ից սկսած**	Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
36	Տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը տեղամասային կենտրոնում հրավիրվում է. ***կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը, ժամը 12.00-ին***	44, մաս 7	**26.08.2023-ին ժամը 12:00-ին**	Տեղամասային ընտրական հանձնաժողով
37	Կուսակցությունների գույքի և եկամուտների մասին հայտարարագրերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են. ***հայտարարագիրը ներկայացվելուց հետո՝ հնգօրյա ժամկետում***	8, մաս 6	**մինչև 28.08.2023**	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
38	Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ՝ հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ ՀՌՀ-ի մշտադիտարկման արդյունքները, եզրակացությունը հրապարակվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են՝ ***ոչ ուշ, քան նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 10-րդ օրը***	20, մաս 12	**մինչև 1.09.2023**	Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով
39	Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են. ***նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո 10-րդ օրը***	28, մաս 1	**1.09.2023-ին**	Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
40	Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 14 օր առաջ***	14, մաս 1	**մինչև 3.09.2023**	Ընտրողներ, Լիազոր մարմին
41	Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են. ***հայտարարագրերը ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում.***	28, մաս 4	**մինչև 4.09.2023-ը, 14.09.2023-ը և** 24.09.2023	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
42	Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողները՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ իրենց նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմում լիազոր մարմին կարող են ներկայացնել՝ ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն***	10, մաս 3.1 ԿԸՀՈ N 11-Ն, 23.02.22թ.	**մինչև 5.09.2023 ժամը 14:00-ն**	Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողներ
43	Թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կամ դաշինքի անդամ կուսակցություններն ինքնաբացարկի մասին դիմում կարող են ներկայացնել. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	137, մաս 2	**մինչև 7.09.2023 ժամը 18:00-ն**	Թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
44	Քվեաթերթիկների տպագրման համար ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների և ընտրական տեղամասերի Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է. ***քվեարկության օրվանից 10 օր առաջ***	12, մաս 2 59, մաս 5	**7.09.2023-ին**	Լիազոր մարմին
45	Քվեաթերթիկների նմուշների սահմանվում են. ***քվեարկության օրվանից 10 օր առաջ***	51, մաս 2, կետ 5	**7.09.2023-ին**	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
46	Քվեաթերթիկները տպագրվում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 10, և ոչ ուշ, քան 3 օր առաջ***	59, մաս 4, 5	7.09.2023 - 14.09.2023	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
47	Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքներով վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությունը կազմվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում***	29, մաս 5	**մինչև 8.09.2023-ը**	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն
48	Ընտրողներին քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, տեղամասային կենտրոնի հասցեի և ժամանակի մասին ծանուցագիր ուղարկվում է. ***քվեարկության օրվան նախորդող 9-րդ օրվանից մինչև քվեարկության նախորդ օրը***	18, մաս 4	**8.09.2023-ից մինչև 16.09.2023-ը**	Լիազոր մարմին
49	Տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորման մեջ ներբեռնվող՝ էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակները Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 8 օր առաջ***	12, մաս 2	**մինչև 9.09.2023**	Լիազոր մարմին

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
50	Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ՝ հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ ՀՌՀ-ի մշտադիտարկման արդյունքները, եզրակացությունը հրապարակվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են՝ ***ոչ ուշ, քան նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 20-րդ օրը***	20, մաս 12	**մինչև 11.09.2023**	Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով
51	Ընտրողների վերջնական ցուցակները՝ ըստ ընտրական տեղամասերի, ներբեռնելու հնարավորությամբ համացանցում՝ www.police.am հասցեով տեղադրվում են. ***քվեարկության օրվանից 7 օր առաջ***	13, մաս 2	**10.09.2023-ին**	Լիազոր մարմին
52	Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են. ***նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո 20-րդ օրը***	28, մաս 1	**11.09.2023-ին**	Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
53	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քարտուղարը կամ հանձնաժողովի անդամն այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին կարող է ներկայացնել. ***մինչև քվեարկության օրվան նախորդող 5-րդ օրվա ժամը 18.00-ն***	45, մաս 6 կետ 3	**մինչև 12.09.2023 ժամը 18:00-ն**	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ, քարտուղար, հանձնաժողովի անդամ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
54	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները՝ յուրաքանչյուր ընտրական տեղամասին մեկ կնիք հաշվարկով և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքներն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին հանձնվում են. ***քվեարկությունից ոչ շուտ, քան 5, և ոչ ուշ, քան 3 օր առաջ***	60, մաս 4	12.09.2023 - 14.09.2023	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
55	Ընտրողը քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում իրեն ընդգրկելու մասին դիմում՝ լիազոր մարմին, իրավունք ունի ներկայացնել. ***քվեարկության օրվան նախորդող 5 օրվա ընթացքում, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև քվեարկության ավարտը***	14, մաս 2	**12.09.2023-ից մինչև 17.09.2023-ը, մինչև** 20.00	Ընտրողներ, Լիազոր մարմին
56	Հասարակական կազմակերպություններին, զանգվածային լրատվության միջոցներին գրանցումներն իրականացնելու համար տրամադրված օգտահաշվով գրանցումներ կատարելու հնարավորությունը կասեցվում է. ***քվեարկության օրվանից 3 օր առաջ***	8.1, մաս 2 ԿԸՀՈ 3-Ա 31.01.2023	**14.09.2023-ին ժամը՝ 00:00-ից**	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
57	Տեղամասային կենտրոնում փակցվող և տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից գործածվող ընտրողների ցուցակները՝ կազմված մատյանի ձևով՝ ըստ ընտրական տեղամասերի, և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները, ինչպես նաև քվեարկության օրն ընտրական տեղամասում ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրվում են. ***քվեարկության օրվանից 3 օր առաջ***	12, մաս 3	**14.09.2023-ին**	Լիազոր մարմին
58	Ընտրողների ցուցակի օրինակը տեղամասային կենտրոնում բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. ***քվեարկության օրվանից 2 օր առաջ***	13, մաս 4	**15.09.2023-ին**	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
59	Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին քվեաթերթիկները, քվեարկության ծրարները, ինքնասոսնձվող դրոշմանիշերը, հանձնաժողովի կնիքը, հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, տեխնիկական սարքավորումները հանձնվում են. ***քվեարկության նախորդ օրը***	59, մաս 6 60, մաս 5	**16.09.2023-ին**	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
60	Քվեարկության սենյակի կահավորումն ավարտվում է. ***քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն***	57, մաս 3	**16.09.2023-ին մինչև ժամը 24:00-ն**	Համայնքի ղեկավար, տեղամասային ընտրական հանձնաժողով
61	Նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կապված բոլոր գործառնությունները դադարեցվում են. ***քվեարկության օրվանից***	27, մաս 7	**17.09.2023-ից**	Առևտրային բանկեր
62	Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստն սկսվում է. ***քվեարկության օրը՝ ժամը 07:00-ին***	64, մաս 1	**17.09.2023-ին ժամը 07.00-ին**	Տեղամասային ընտրական հանձնաժողով
63	Քվեարկությունն սկսվում է ***Քվեարկության օրը ժամը՝ 08:00-ին***	56, մաս 1 65, մաս 1	**17.09.2023-ին ժամը 08.00-ին**	Տեղամասային ընտրական հանձնաժողով
64	Քվեարկությունն ավարտվում է. ***Քվեարկության օրը ժամը՝ 20:00-ին***	56, մաս 1 68, մաս 1	**17.09.2023-ին ժամը 20:00-ին**	Տեղամասային ընտրական հանձնաժողով
65	Քվեարկության արդյունքների աղյուսակավորում՝ ըստ ընտրական տեղամասերի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների իրականացվում է. ***ոչ ուշ, քան քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 00.00-ից սկսած***	8, մաս 10	**18.09.2023 ժամը 00:00-ից սկսած**	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
66	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության կազմումն ավարտվում և արձանագրությունը հրապարակվում է. ***ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 12 ժամ հետո***	71, մաս 5	**18.09.2023 մինչև ժամը 08:00**	Տեղամասային ընտրական հանձնաժողով
67	Ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը, ընտրողների ցուցակների փաթեթը, չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը, չօգտագործված քվեաթերթիկները, քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը, արձանագրության մեկ քաղվածք, գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեխնիկական սարքավորումն ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 14 ժամվա***	71, մաս 9	**18.09.2023 մինչև ժամը 10:00**	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար
68	Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների մուտքագրումը համակարգիչ ավարտվում է. ***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 20 ժամվա ընթացքում***	73, մաս 2	**18.09.2023 մինչև ժամը 16:00**	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
69	Քվեարկության նախնական արդյունքների աղյուսակավորումն ավարտվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում ներբեռնելու հնարավորությամբ տեղադրվում է. ***ոչ ուշ, քան քվեարկության ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում***	8, մաս 10	**18.09.2023 մինչև ժամը 20:00**	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
70	Երևանի ավագանու ընտրությունների քվեարկության նախնական արդյունքներն ամփոփվում և արձանագրությամբ վավերացվում են. ***քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո***	75, մաս 1	**18.09.2023 մինչև ժամը 20:00**	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
71	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը և արձանագրության մեկ քաղվածք Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***քվեարկության ավարտից 24 ժամ հետո***	73, մաս 3	**18.09.2023 ժամը** 20:00	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
72	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել. ***քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո 2 օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն***	50, մաս 1	**18.09.2023 -ին ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00 կամ 19.09.2023 -ին ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն**	Ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու, վստահված անձ, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ
73	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել. ***քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն***	48, մաս 12, 14	**18.09.2023 -ին ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00 կամ 19.09.2023 -ին ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն**	Կուսակցություն, կուսակցությունների դաշինք, ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու, վստահված անձ համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
74	Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումն իրավասու անձը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***քվեարկության հաջորդ օրը ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո 3 օրը՝ ժամը 11.00-ն***	48, մաս 16	**18.09.2023-ին ժամը 12.00-ից մինչև 20.09.2023 -ը՝ ժամը 11.00-ն**	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ, վստահված անձ, համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ, քվեարկությանը չմասնակցած ընտրող
75	Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումներն ընդունվում են ***քվեարկության հաջորդ օրը ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝ ժամը 11.00-ն***	48, մաս 16	**18.09.2023-ին ժամը 12.00-ից մինչև 20.09.2023 -ը՝ ժամը 11.00-ն**	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
76	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմումները, ինչպես նաև ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներն ընդունվում են. ***քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն***	48, մաս 14 50, մաս 1	**18.09.2023 -ին ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00 կամ 19.09.2023 -ին ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն**	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
77	Ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների արձանագրությունների սկանավորված քաղվածքները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում ներբեռնելու հնարավորությամբ տեղադրում են. ***քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 36 ժամ հետո***	8, մաս 10	**19.09.2023 մինչև ժամը 08:00**	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
78	Պատահականության սկզբունքով վերահաշվարկ իրականացնելու համար երեք ընտրական տեղամասերի համարները որոշելու վիճակահանությունն անցկացվում է. ***քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 11:00-ին***	50, մաս 1.1 ԿԸՀՈ 8-Ն, 27.01.22թ.	**19.09.2023 ժամը 11:00-ին**	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
79	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում վերահաշվարկի աշխատանքներն իրականացվում են. ***վերահաշվարկի դիմումների ընդունման համար սահմանված վերջնաժամկետի օրը՝ ժամը 14.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը՝ ժամը 14.00-ին***	50, մաս 6	**19.09.2023 ժամը 14:00-ից մինչև 22.09.2023 ժամը 14:00-ն**	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
80	Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքներով վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությունը կազմվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում***	29, մաս 5	**մինչև 18.09.2023**	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն
81	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում***	60, մաս 6	**մինչև 20.09.2023**	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
82	Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են. ***ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ***	28, մաս 1	**մինչև 21.09.2023**	Կուսակցություն, Կուսակցությունների դաշինք

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
83	Երևանի ավագանու ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել. ***ընտրության արդյունքներն ամփոփելու համար սահմանված ժամկետից առնվազն 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	48, մաս 13, 15	**22.09.2023 մինչև ժամը 18.00-ն**	Կուսակցություն, կուսակցությունների դաշինք
84	Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ՝ հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ ՀՌՀ-ի մշտադիտարկման արդյունքները, եզրակացությունը հրապարակվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են ` ***ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ***	20, մաս 12	**22.09.2023-ին**	Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով
85	Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքներով վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությունը կազմվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ընտրության արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 1 օր առաջ***	29, մաս 5	**մինչև 23.09.2023**	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն
86	Երևանի ավագանու ընտրության քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում է. ***քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը***	75, մաս 3	**24.09.2023-ին**	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
87	Երևանի ավագանու ընտրությունների արդյունքներն ամփոփվում և ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումն ընդունվում է. ***քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը***	75, մաս 7 141, մաս 1	**24.09.2023-ին**	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
88	Քվեարկության արդյունքների վերջնական աղյուսակավորումը՝ ըստ ընտրական տեղամասերի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների ներբեռնելու հնարավորությամբ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է. ***ընտրության արդյունքներով որոշումն ընդունելուց հետո՝ ոչ ուշ, քան նիստի ավարտից հետո՝ մեկ ժամվա ընթացքում***	8, մաս 10	**24.09.2023-ին**	Կենտրոնական ընտրական հանձնաժողով